ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Իրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի ապրիլի 12-ի թիվ 1.1 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/31»

ՀՀ մշակույթի նախարարության կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/31** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 10.04.2019թ.-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 12.04.2019թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1

Հարգելի՝ Գնահատող Հանձնաժողով,

Խնդրում ենք պարզաբանել, Առաջին տեղի համար նախատեսված փաստաթղթերի ներկայացման ժամանակ՝ (համաձայն հրավերի Հավելված 6.1) նշված է ապրանքային նշան, եթե համակարգիչը հավաքվում է տարբեր արտադրող Ընկերությունների մասերից/դետալներից, սակայն այլ Կազմակերպության կողից, այս դեպքում որպես ապրանքային նշան ինչ է լրացվում:

Կանխավ շնորհակալություն:

Պարզաբանում N 1

Հարգելի մասնակից՝ հայտնում ենք, որ ապրանքային նշանը՝ դա նիշ է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար և դրանց գրանցումը իրականացվում է «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ պետական լիազոր մարմնի կողմից (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Մտավոր սեփականության գործակալություն):

Ըստ այդմ հայտնում ենք, որ եթե համակարգիչը հավաքող Ընկերությունը չունի գրանցված համապատասխան ապրանքային նշան, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (համաձայն հրավերի հավելված N 6.1-ի) **«ապրանքային նշանը»** սյունակում նշում է հավաքվող մասերը/դետալները և համապատասխան արտադրող Ընկերությունների ապրանքային նշանները, **«արտադրողի անվանումը»** սյունակում նշում է համակարգիչը հավաքող Ընկերության անվանումը, **«ծագման երկիրը»** սյունակում թվարկում է հավաքվող մասերի/դետալների անվանումներին համապատասխան ծագման երկրի անվանումները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/31 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արսեն Սողոմոնյանին:

Հեռախոս՝ 011-58-51-78:

էլ.փոստ՝ cultproject@mail.ru

ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/31 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

Արձանագրություն N 2

«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/31» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **12.04.2019 թ.**

ժ. 10:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Մուշեղյան

Հ. Խեչումյան

Ա. Ավալյան

Ռ. Պողոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Սողոմոնյան

1. Հարցման վերաբերյալ պարզաբանում տրամադրելու մասին

(Հ. Մարտիրոսյան)

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/31» ծածկագրով հրավերի N 1 չափաբաժնի՝ անձնական համակարգիչների ձեռքբերման վերաբերյալ 2019 թ. ապրիլի 10-ին ստացվել է հարցադրում:

Հարցադրում N 1

Հարգելի՝ Գնահատող Հանձնաժողով,

Խնդրում ենք պարզաբանել, Առաջին տեղի համար նախատեսված փաստաթղթերի ներկայացման ժամանակ՝ (համաձայն հրավերի Հավելված 6.1) նշված է ապրանքային նշան, եթե համակարգիչը հավաքվում է տարբեր արտադրող Ընկերությունների մասերից/դետալներից, սակայն այլ Կազմակերպության կողից, այս դեպքում որպես ապրանքային նշան ինչ է լրացվում: Կանխավ շնորհակալություն:

1.1. Հանձնաժողովը որոշեց՝

Ուսումնասիրելով մասնակցի կողմից ներկայացված հարցադրումը՝ հաստատել «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/31» ծածկագրով հրավերի վերաբերյալ 10.04.2019 թ. ստացված հարցադրմանը (www.armeps.am) համակարգի միջոցով տրամադրվող պարզաբանման և հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը, համաձայն որի.

Պարզաբանում N 1

Հարգելի մասնակից՝ հայտնում ենք, որ ապրանքային նշանը՝ դա նիշ է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար և դրանց գրանցումը իրականացվում է «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ պետական լիազոր մարմնի կողմից (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Մտավոր սեփականության գործակալություն):

Ըստ այդմ հայտնում ենք, որ եթե համակարգիչը հավաքող Ընկերությունը չունի գրանցված համապատասխան ապրանքային նշան, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակցի

կողմից ներկայացվելիք առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (համաձայն հրավերի հավելված N 6.1-ի) **«ապրանքային նշանը»** սյունակում նշում է հավաքվող մասերը/դետալները և համապատասխան արտադրող Ընկերությունների ապրանքային նշանները, **«արտադրողի անվանումը»** սյունակում նշում է համակարգիչը հավաքող Ընկերության անվանումը, **«ծագման երկիրը»** սյունակում թվարկում է հավաքվող մասերի/դետալների անվանումներին համապատասխան ծագման երկրի անվանումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Հ. Մարտիրոսյան
Անդամներ՝		Հ. Մուշեղյան
		Հ. Խեչումյան
		Ռ. Պողոսյան
		Ա. Ավալյան
Քարտուղար՝		Ա. Սողոմոնյան